

ՆԵՐԳԱՂԹԻՐԸ

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԸ ԱՅՍՕՐ ՊԷՅՐՈՒԹ ԿԸ ՀԱՍՆԻՆ

Դամասկոսէն այսօր՝ չորեքշաբթի առաւօտ ստացանք հեռաձայնա-
յին հետեւեալ հաղորդագրութիւնը. —

Դամասկոսի ներգաղթողներէն 123 ընտանիք այսօր՝ չորեքշաբթի
առտուան ժամը 5.30ին շոգեկառքով ճամբայ ելան դէպի Պէյրութ, մաս
կազմելու համար Դ. կարաւանին: Ներգաղթի կօմիտէն երէկ՝ երեքշաբթի
երեկոյան ժաիը 6.30ին լուր տուաւ անոնց, որպէսզի իսկոյն կայարան
փոխադրուին: Ներգաղթողները գիշերը փոխադրուեցան կայարան և առ-
տուան ճամբայ ելան իսանդաւառ մթնոլորտի մը մէջ:

Կը կարծուի թէ Դ. կարաւանը ճամբայ պիտի ելլէ քանի մը օրէն:
Ներգաղթի նաւը այս առաւօտ հասաւ Պէյրութի նաւահանգիստը: Այս
նաւով պիտի մեկնին միայն Դամասկոսէն եկող ներգաղթողները, մօտ
600 հոգի: